ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/10/1-89-2017

ք. Երևան <<20>> <<հոկտեմբեր>> 2017 թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի Կողմից, և «Էլիտ-Սպորտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հրաչիկ Քանանյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս Կողմից, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա Կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային պարագաներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելված՝ «Գնման ժամանակացույցով» սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա Կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի Կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի.

3.1.2 եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

3.1.2.1 պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

3.1.2.2 չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

3.1.2.3 հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

3.1.3.1 պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

3.1.3.2 հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

3.1.4.1 ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

3.1.4.2 հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

3.1.4.3 պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի Կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի Կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի Կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի.

3.1.8 զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից.

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.3.4.1 Գնորդի Կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները.

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում.

3.4.3 ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 կետի 3.1.2.2 ենթակետին և 3.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի Կողմից սահմանված ժամկետներում.

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք.

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

3.4.6 թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը.

3.4.7 հետ տանել Գնորդի /Ստացողի/ Կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը.

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները.

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի Կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 71 280 000 (յոթանասունմեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի Կողմից իրականացվող բոլոր ծախսերը:Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ N 3-հավելվածով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկԿողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր Կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1).

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ. Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից երկօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր Կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը.

6.5 եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր Կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար.

7.2 Վաճառողի Կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ.

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի Կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով.

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

7.7 տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման՝ հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.4 Պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի Կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011002954 ՀՎՀՀ-02586282	«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ ք.Երևան, Սարի Թաղ 6 շենք 122/3 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163048552307 ՀՎՀՀ 02599962
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Վ. Էլոյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ _____ Հ. Քանանյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
<<20>> <<փետրվար>> 2017թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N _ ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/10/1-89-2017

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Բ	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓՍԵՐԸ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
	Սպորտային հագուստ (սպորտային կոշիկ (բոթաս), սպորտային կոստյում (համազգեստ), սպորտային շապիկ (պոլո), բաճկոն, սպորտային պայուսակ, սպորտային գլխարկ, շորտ, հողաթափ)	XS, S, M, L, XL, XXL, XXXL, XXXXL սպորտային կոշիկ (բոթաս) և հողաթափը՝ 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46	**Սպորտային կոշիկ (բոթաս)** Մոդելը կլասիկ, կարված բնական փափուկ զամշի և սինթետիկի համադրությամբ, դիմացի վերևի հատվածը և լեզվակը կտորե, գույնը կապույտի և սպիտակի համադրությամբ, սուպինատորով, լեզվակի վրա տեղադրված արտադրողի առևտրային տարբերանշանը, ինչպես նաև յուրաքանչյուր զույգի դրսի կողմից վերին մասի քուղերի հատվածում՝ 5,5 x 5,7 սմ չափսով և կրունկի հատվածում ֆիրմայի տարբերանշանը, քուղերը (շնուրոկ) կապույտ գույնի, կոշկատակը հատուկ ամրության կաուչուկից՝ շագանակագույն, “ADIDAS”, “NIKE”, “ASICS”, “KELME” կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Սպորտային կոստյում (համազգեստ)** Բաղկացած է պիջակից և տաբատից, 100 % պոլիեստեր, պիջակի գույնը՝ մուգ կապույթ, նարնջագույնի համադրությամբ, տաբատը՝ մուգ կապույթ: Պիջակի դիմացի ձախ կողմում կրթքավանդակի վրա Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գունավոր, լայնությունը՝ 8 սմ, բարձրությունը՝ 8 սմ, աջ կողմում կրթքավանդակի վրա արտադրողի առևտրային տարբերանշանը և ֆիրմայի անվանումը՝ նարնջագույն, չափսերը՝ երկարությունը՝ 6 սմ, բարձրությունը՝ 1 sm: Ձախ և աջ թևերի ամբողջ երկայնքով՝ նարնջագույն դեկորատիվ հատված՝ 3.5 սմ լայնությամբ, դաստակների մասում՝ կտորե ռետին: Պիջակը կայծակ-ճարմանդով է՝ երևացող, կայծակ-ճարմանդի բռնակի վրա արտադրողի առևտրային տարբերանշանը, երկու չերևացող կայծակ-ճարմանդով գրպաններով: Տաբատի գոտքատողի ռետինի երկայնքով՝ անցկացված ամրացնող քողով: Տաբատի աջ գրպանի հատվածում արտադրողի ֆիրմայի անվանումը ՝ 9 x 1.5 սմ չափսից ոչ ավել, նարնջագույն գույնի, տաբատի գրպանները չերևացող կայծակ-ճարմանդով, տաբատի ներքևի հատվածում՝ կտորե ռետին՝ բացվող կայծակ-ճարմանդով՝ 25 սմ երկարությամբ:

			"ADIDAS", "NIKE", "ASICS", "KELME" կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Սպորտային շապիկ (պոլո)** 100 % պոլիէստեր, գույնը՝ սպիտակ, կապույտի կա, կարմրի համադրությամբ, դիմացի վերևի հատվածում երեք կոճակներով, դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը և ֆիրմայի անվանումը ՝ 6 x 1 սմ չափսով, ձախ կողմում Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գունավոր, լայնությունը՝ 8 սմ, բարձրությունը՝ 8 սմ, թիկունքի հատվածում "ARMENIA" գրառումը, չափսը՝ լայնությունը 32,5 սմ, իսկ տառերի բարձրությունը 6 սմ: Օձկը և թևերի վերջնամասը՝ մուգ կապույտ կամ կարմիր: Թևերի տակից մինչև շապիկի վերջը՝ դեկորատիվ ներկարված հատված՝ կապույտ կամ կարմիր գույնի: "ADIDAS", "NIKE", "ASICS", "KELME" կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Բաճկոն** 100 % պոլիէստեր, գույնը՝ մուգ կապույտ, կրծքավանդակի աջ կողմում ուսագլխից 17 սմ ներքևամասում արտադրողի առևտրային տարբերանշանը, ձախ կողմում Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գունավոր և "ARMENIA" գրառումը, թիկունքի հատվածում "ARMENIA" գրառումը: Զինանշանի չափսն է՝ լայնությունը 8 սմ, բարձրությունը 8 սմ: Զինանշանի ներքևի հատվածում "ARMENIA" գրառման չափսերն են՝ լայնությունը 6 սմ, բարձրությունը 1 սմ, իսկ զինանշանի և "ARMENIA" գրառման միջև հեռավորությունը 3 մմ: Բաճկոնի մեջքի հատվածում "ARMENIA" գրառման լայնությունն է 32,5 սմ, իսկ տառերի բարձրությունը 6 սմ: Կրծքավանդակի դիմացի աջ հատվածում՝ երևացող կայծակ-ճարմանդով գրպան, մեջից ձախ հատվածում ներքին գրպան՝ կայծակ-ճարմանդով: Ներքեվի հատվածում երկկողմյա գրպանները երևացող կայծակ-ճարմանդով, հիմնական կայծակ-ճարմանդը՝ երևացող, տաք ամրակցված գլխարկով (կապիշոն), կապիշոնի վրա՝ արտադրողի առևտրային տարբերանշանը, ջերմապաշտպանիչ շերտը սինտեպոն՝ խտությունը 230 գ/մ^2, "ADIDAS", "NIKE", "ASICS", "KELME" կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Սպորտային պայուսակ**

			100 % պոլիէստեր, գույնը մուգ և բաց կապույտի համադրությամբ, բռնակները ինքնակպչուն, "ARMENIA" գրառումով, չափսը՝ 57 x 26,5 x 25,5 սմ, կողքի մեծ գրպանով, դիմային հատվածում գտնվող արտադրողի մեծ առևտրային տարբերանշանով, կողքային հատվածներում՝ արտադրողի փոքր առևտրային տարբերանշաններով, ուսային հատուկ ուսադիրով՝ արտադրողի առևտրային տարբերանշանով, “ADIDAS”, “NIKE”, “ASICS”, “KELME” կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Սպորտային գլխարկ** 100 % բամբակ, գույնը կապույտ, ձախ կողմում Հայաստանի Հանրապետության դրոշը և "ARMENIA" գրառումը, ճակատային հատվածում և հետնամասում արտադրողի առևտրային տարբերանշանը, հետնամասում չափսի շարժական կարգավորիչ, “ADIDAS”, “NIKE”, “ASICS”, “KELME” կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Շորտ** 100 % պոլիէստեր, գույնը մուգ կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը և ֆիրմային անվանումը, դիմացի ձախ կողմից բաց գրպան ինքնակպչուն փականով, հետևի աջ մասում մեկ փակ գրպան՝ ինքնակպչուն փականով, “ADIDAS”, “NIKE”, “ASICS”, “KELME” կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ): **Հողաթափ** Պատրաստված հատուկ ամրության վուլկանացված ռետինից, գույնը սև, հողաթափի վերին շերտի վրա գրառված արտադրողի տարբերանշանով, վերին մասը հարթ ռետինե գոտիով՝ աջ հատվածում գրառված արտադրողի տարբերանշանով, “ADIDAS”, “NIKE”, “ASICS”, “KELME” կամ այլ միջազգային ապրանքանիշի կամ համարժեքը, ISO 9001:2008 որակի միջազգային ստանդարտին համապատասխանող, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից արտոնագրված (պատենտ):

Պարտադիր պայմաններն են՝
- որակի սերտիֆիկատի առկայությունը
- ապրանքի չօգտագործված լինելը,
- լրակազմի մեջ ներառված բոլոր ապրանքատեսակների նույն ապրանքանիշի լինելը՝ հավաքական թիմի ամբողջական և միանման հանդերձավորումը (էկիպիրովկա) ապահովելու համար,
- արտադրողի գրավոր համաձայնությունը՝ իր ապրանքանիշի օգտագործումը Հայաստանի հավաքական թիմերի կողմից:

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011002954
ՀՎՀՀ-02586282

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Էլոյան
/Ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ
ք.Երևան, Սարի Թաղ 6 շենք 122/3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163048552307
ՀՎՀՀ 02599962

Տնօրեն՝

_____ Հ. Քանանյան
(ստորագրություն)
Կ. Տ.

«ЭЛИТ-СПОРТ»
«ԷԼԻՏ-ՍՊՈՐՏ»
02599962

Հավելված № 2
«20» «հունվար» 2017 թ. կնքված
№ ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/10/3-89-2017 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը				1-ի եռամսյակ		2-ին եռամսյակ		3-ին եռամսյակ		4-ին եռամսյակ		Ընդամենը	
N	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
	Սպորտային հագուստ	Լրակազմ	132000	540	71280000							540	71280000
	Ընդամենը												

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011002954

ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար

Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ

ք.Երևան, Սարի Թաղ 6 շենք 122/3

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163048552307

ՀՎՀՀ 02599962

Տնօրեն՝

Հ. Քանանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված № 3
«20» «Դեկտեմբեր» 2017 թ. Կնքված
№ ՍՊ-ԵՀԱՊՁԲ-15/10/1-89-2017 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

աճող. հազ. դրամ

N	Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում											
			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	1	3 = (4:15)	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Սպորտային հագուստ	71280,000		19245,60	19245,60	39204,00	39204,00	39204,00	71280,00	71280,00	71280,00	71280,00	71280,00	71280,00
	Ընդամենը	**71280,000**		**19245,60**	**19245,60**	**39204,00**	**39204,00**	**39204,00**	**71280,00**	**71280,00**	**71280,00**	**71280,00**	**71280,00**	**71280,00**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011002954

ՀՎՀՀ - 02586282

Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ

ք.Երևան, Սարի Թաղ 6 շենք 122/3

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163048552307
ՀՎՀՀ 02599962

Տնօրեն՝ Հ. Քանանյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 4
<< >> << >> 20 թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի
,N **ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/10**

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ-Սպորտ» ՍՊԸ
ք.Երևան, Սարի Թաղ 6 շենք 122/3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163048552307
ՀՎՀՀ 02599962

ԳՆՈՐԴ

ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 900011002954
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի Կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի Կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N ՍՊ-ՇՀԱՊՁԲ-15/10 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր Կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն